



Մր. Ստեփանոս Շաբաթորեայ Հայ Դպրոց

Մ
փ
ի
ւ
ռ
ք
ի

Տ
ա
ր
ի



ՏԱՐԵԳԻՐՔ

2021–2022

«ՄԿԻՆԶՐԻ ՏԱՐԻ»

U
Φ
h
F
Ω
ρ



Մայտա Մելքոնեան

ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ



2021-2022 Տարեշրջանը

«Մփիւոքի Տարի»

Արամ Ա. կաթողիկոս իր կոնդակով կը յայտարարէ 2022-ը «Մփիւոքի Տարի» :

Սբ. Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ Դպրոցը յաջողութեամբ բոլորեց իր 85-րդ տարեշրջանը, շնորհիւ իր ուսուցիչ-ուսուցչուհիներու տարած անխոնջ աշխատանքին: Ձեր վարձքը կատար սիրելի ուսուցիչներ:

Դպրոցիս 85-րդ տարեշրջանը, 2021-2022, սկսաւ Սեպտեմբեր 11-ին 87 աշակերտներով եւ աւարտին կը հասնի Յունիս 11-ին: Ինչպէս գիտէք, ունինք Մանկամսուրէն Տասներկրորդ դասարան: Դպրոցի ուսուցչական կազմին կողքին ունինք փոխ-ուսուցչուհիներ՝ Տիկին՝ Վերա Խսկէնտէրեան եւ Տիկին Նարդուհի Ապրիմեան եւ օգնականուհի՝ մեր շրջանաւարտներէն Օր. Թինա Կոտիկեան: Ձեր բոլորին վարձքը կատար սիրելիներ:

Դպրոցի դասընթացքը շաբաթը միայն երեք ժամ է: Կը դասաւանդուին Հայերէն, գրականութիւն, հայոց պատմութիւն, հայկական պարն ու երգը: Կ'օգտագործենք արդի դասագիրքեր եւ աշխատանքային տետրակներ: Տարուան ընթացքին յատկապէս կը նշենք Սեպտեմբեր 21՝ Հայաստանի անկախութեան օրը, Մշակոյթի ամիսը, Ամանորը, Վարդանանցը, Մայիս 28-ը ինչպէս նաեւ Մեծ Եղեռնը:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս դպրոցը իր մասնակցութիւնը բերաւ եկեղեցական արարողութիւններուն: Ճրագալոյցի եւ Խթման երեկոներուն Սուրբ Գիրքէն ընթերցումներ կատարեցին ընտրուած խումբ մը աշակերտ-աշակերտուհիներ: Մեծ Պահքի շրջանին հսկումի արարողութիւններուն դարձեալ մասնակցեցան զանազան դասարաններէ ընտրուած խումբ մը աշակերտներ: Սրբոց Վարդանանցի Օրը երեկոյեան ժամերգութենէն ետք աշակերտութիւնը օրուան պատշաճ յայտագիր մը ներկայացուց եկեղեցւոյ մէջ, արժանանալով ներկաներու գնահատանքին:

ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ



Չորրորդին ութերորդ դասարաններու կարգ մը աշակերտներ մասնակցեցան Հայ Օգնութեան Միութեան Արեւելեան ԱՄՆ-ի Շրջանային Վարչութեան կազմակերպած շարադրութեան մրցումին: ԱՄՆի Արեւելեան Շրջանի միօրեայ վարժարաններու անգլերէն ներկայացուած շարադրութիւններու բաժնէն երրորդ եւ չորրորդ դասարաններու խմբակէն երկրորդ հանդիսացաւ Թալին Ղազարեանց, իսկ հայերէն ներկայացուած շարադրութիւններու բաժնէն եօթներորդ եւ ութերորդ դասարաններու խմբակէն երկրորդ հանդիսացաւ Ալեքս Պըլլքեան, իսկ երրորդ՝ Լիաննա Մէրայտարեան:

Սրտի մեծ գոհունակութեամբ կ'ըսեմ որ «Շողեր» տարեգիրքի Ա. թիւը լոյս տեսած էր 19 տարիներ առաջ, 2002– 2003 տարեշրջանին:

Այս տարուան Տասներկրորդ դասարանի մեր շրջանաւարտն է Յակոբ Քէչեճեան: Միրելի շրջանաւարտ, կը շնորհատրեմ քեզ եւ ծնողքդ, կը մաղթեմ նորանոր յաջողութիւններ եւ երազներու իրականացում: Մի՛ մոռնար մեր մայրենի լեզուն, հպարտ եղիր հայութեամբ, ի մտի ունենալով Զապէլ Եսայանի հետեւեալ խօսքը.-

«Մեր հայրերէն մեզի աւանդուած ժառանգութիւններէն ամենէն շքեղը, ամենէն իրականը մեր գեղեցիկ, հարուստ եւ մեծավայելուչ լեզուն է, պէտք է պահպանենք յուզումով, հրայրքով եւ խանդավառութեամբ: Ես վստահ եմ, որ կը պաշտպանենք»:

Մայտա Մելքոնեան, Տնօրէնուհի

Մր. Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ Դպրոցի Հիմն
Խօսք՝ Մայտա Մելքոնեան
Երաժշտութիւն՝ Մարինէ Մարգարեան



Հայ դպրոց մեր սիրասուն,
Ամբողջ հոգի շողշողուն.
Հայ լեզուի դու պահապան,
Վառ կանթեղ ես անսասան:

Կեցցես, կեցցես առյաւել,
Հայկեան օճախ ամրակերտ.
Մնաս փարոս լուսաշող,
Մշակոյթը պանծացնող:

Մնաս փարոս լուսաշող,
Սերունդներ առաջնորդող:

Մր. Ստեփանոս Շաբաթօրեայ
Դպրոցի հիմն.

Հոկտոմբեր 17, 2021





Յ
Ո
Ւ
Ն
Ի
Ս

2
0
2
0



Շրջանաւարտներ՝

Կանճեան Անի, Մանճիկեան Անի, Սարգիսեան Ռօզալին, Աբրահամեան Էմին,
Նազաշեան Ճէք, Պազարպաշեան Վիգի, Պերէճիբլեան Նարին, Սարգարեան Ալեքս:



Յ
Ո
Ւ
Ն
Ի
Ս

2
0
2
1



Շրջանաւարտներ՝

Ուրֆալեան Անի, Կանճեան Լոռի, Բարսեղեան Նարէ, Գրաֆեան Քնար:



Սուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ Վարժարանի 83-րդ ուսումնական տարեշրջանը (2019-2020) իր աւարտին հասնելով, հասած է նուիրական այն պահը, երբ երկար տարիներու աշխատանքէ ետք, այսօր պատիւը կ'ունենանք վկայուելու մեր սիրելի դպրոցէն:

Ճիշդ է, այսօր կը փակենք 2019-2020 տարեշրջանը: Հրաժեշտ կու տանք մեր դպրոցին, ուսուցչական կազմին, ընկերներուն, սակայն կը սկսինք ուսումի նոր ճանապարհով քալել դէպի լուսաւոր ապագայ:

Այս դպրոցը մեզի սորվեցուց հայոց լեզուն, կրօնքը, մշակոյթը, պատմութիւնը եւ սովորութիւնները: Ամէն շաբաթ մեծ ուրախութեամբ շաբաթօրեայ դպրոց՝ մեր երկրորդ տունը կ'երթայի, որպէսզի հանդիպիմ իմ սիրելի դասընկերներուս, որոնք կու գային տարբեր շրջաններէ: Մեծ ուրախութեամբ կը խօսէինք մեր առօրեայ ծրագիրներուն մասին:

Կ'ուզեմ իմ խորին շնորհակալութիւններս յայտնել մեր սիրելի ուսուցչական կազմին, սկսելով տնօրէնուհի տիկին Մայտայէն, տիկին Երանէն, եւ տիկին Նորմայէն, որոնք իմ հայերէնի առաջին ուսուցչուհիներս եղած են՝ հայ քոյրերու վարժարանէն ներս:

Չեմ մոռնար նաեւ միւս բոլոր ուսուցիչ-ուսուչուհիներս, որոնք ուրախութեամբ, համբերութեամբ, եւ հաճոյքով սորվեցուցին հայերէն լեզուն եւ մշակոյթը: Մեծ շնորհակալութիւն պարոն Վահէին, որ այս վերջին երկու տարիներու ընթացքին մեզի սորվեցուց հայաստանէն ներս տեղի ունեցող շարժումներուն մասին. կը կարդայինք «Հայրենիք» թերթը, եւ կը փոխանակէինք մեր կարծիքներն ու մտածումները:

Կ'ուզեմ յիշել նաեւ իմ սիրելի եկեղեցիս, ուր փոքր տարիքէս յաճախած եմ, մանաւանդ հսկումի արարողութիւններուն, որոնց անհամբեր կը սպասէի. առանց բացակայութեան հաճոյքով իմ բաժինս կը բերէի Սուրբ Ծնունդի հսկումի եւ Զատիկուան եկեղեցական արարողութիւններուն: Մեծ կարօտով պիտի յիշեմ, յուսալով որ առիթը կ'ունենամ դարձեալ շապիկ հագնիլ եւ մասնակցութիւնս բերել:



Նաեւ, մեծ շնորհակալութիւն կը յայտնեմ ծնողքիս, որ անսահման սիրով եւ քաջալերանքով ուղղութիւն տուին՝ համարձակ եւ անվախ ճամբայ ելլել դէպի կեանքի նոր փուլ:

Թէեւ այս տարուան պայմանները առիթ չտուին մեզի որ վերջին դասապահերը մեր դպրոցէն ներս տեղի ունենան, սակայն նոյն այդ պայմանները մեզի ցոյց տուին, թէ որքան անհրաժեշտ եւ հիմնական դեր կը խաղան դպրոցական դասապահերը եւ ընկերային մթնոլորտը:

Մեզմէ իւրաքանչիւրս, հայաշունջ ոգիով՝ ազգային, կրօնական եւ մշակութային գիտելիքներով տոգորուած, հրաժեշտ կու տանք մեր սիրելի դպրոցին: Կը խոստանամ բարձր պահել հայի անունը եւ ապրիլ հայու ոգիով:

Մնաք-բարովի փոխարէն՝ ցոյցութիւն սիրելի դպրոց, յարգելի ուսուցիչներ, եւ սիրելի ընկերներ:

Անի Նանոր Մանճիկեան

Յունիս 13, 2020

«... Ձեզի կ'ըսեմ, ձեզի, հայոց նորահաս երիտասարդներ, ձեր անունին մեռնիմ, ձեր արեւուն մատաղ, տասը լեզու սորվեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատքը ամուր պահեցէք»:
Խաչատուր Աբովեան






Արժանապատիւ Տէր հայր,

Յարգարժան Խնամակալ Մարմին, Տնօրէնուհի եւ Ուսուցչական Կազմ,

Սիրելի Ծնողք եւ ներկաներ,

11 տարիներ առաջ, երբ միայն 7 տարեկան էի, սկսայ յաճախել Սուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ Վարժարանը: Այս վարժարանը առիթը տուաւ ինձի ծանօթանալու Հայ ընկերներու, եւ ես շատ ուրախ ու շնորհակալ եմ անոր համար: Անցնող 11 տարիներուն ընթացքին ունեցանք հրաշալի ուսուցիչներ որոնք ոչ մէկ ջանք խնայեցին մեզի սորվեցնելու Հայերէն լեզուն, քերականութիւնն ու գրականութիւնը ինչպէս նաեւ Հայ մշակոյթը, պարի եւ երգի դասերու միջոցաւ: Նաեւ սորվեցանք Հայկական լուրերուն հետեւիլ կարդալով Armenian Weekly լրագիրը ամէն Շաբաթ առտու 11րդ դասարանին: Այս դպրոցի շնորհիւ է որ ես այսօր կարողութիւնն ունիմ սահուն կարդալու եւ գրելու մեր Հայերէն լեզուն: Ամէն Շաբաթ օր հետեւելով մեր նուիրեալ ուսուցիչներուն ցուցմունքներուն, զարգացուցի Հայերէն լեզուի բառապաշարս եւ հմտութիւնս: Նաեւ բախտաւոր էի որ մայրս փոքր տարիքէս կը հետեւէր իմ դասերուս եւ կ'ուզէր գիտնամ թէ Հայերէնի դասերս նոյնքան, եթէ ոչ աւելի, կարեւոր են քան ամենօրեայ դպրոցի դասերս:

Դժուար է երեւակայել Շաբաթ օր մը առանց Շաբաթօրեայ Վարժարանին: Խառն զգացումներով լեցուած եմ այսօր: Թէեւ յուզուծ եմ որ իմ ժամանակս հոս իբր աշակերտուհի կու գայ վերջաւորութեան, պիտի միշտ յիշեմ իմ ուրախ յիշատակներս հոս տարիներուն ընթացքին ընկերներուս եւ ուսուցիչներուս հետ: Պիտի կարօտնամ եկեղեցին կարդալ պահգի շրջանին, դասարանին մէջ պզտիկ կատակները, եւ մեր Dunkin Donuts-ի պտոյտները: Նաեւ պիտի կարօտնամ դաշնամուր նուագել դպրոցի առիթներու: Շատ աղուոր յիշատակներ ունիմ հոս, որոնց մէջ կան մեր պտոյտները դէպի Հայկական թանգարանը, ծերանոցը, եւ իմ սիրած պտոյտս որ էր Metropoliton թանգարանը այցելել New York-ի մէջ հայկական ցուցադրութիւնը տեսնելու:





Անշուշտ յուզուած եմ որ արդէն այսօր պիտի աւարտեմ, բայց յոյսով եմ որ յաճախ պիտի այցելեմ իմ դպրոցս եւ օգտակար ըլլամ ներկայ աշակերտներուն: Շնորհակալ եմ ձեզի, տիկին Մայտա, բոլոր ուսուցիչներս, դասընկերներս, եւ Սուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ Վարժարանին ամենալաւ վերջին 11 տարիներուս համար:

Նարէ Բարսեղեան

Յունիս 12, 2021



Սիրելի Ներկաներ,

Ուրերորդ դասարանէն սկսայ յաճախել Սբ. Ստեփանոս Շաբաթօրեայ Դպրոցը: Ինծի համար հաճելի էր ամէն Շաբաթ օր գալ դպրոց: Հինգ լաւ տարիներ անցուցի այս յարկին տակ, ուր ուսուցիչները սորվեցուցին մեր մայրենի լեզուն եւ մշակոյթը:

Այս հայկական օճախէն ներս սորվեցայ թէ լեզուն, հայոց պատմութիւնը, հայ երգն ու պարը շատ կարեւոր են մեր ազգի գոյատեւման համար, ասոնք մեր հայկականութեան սիւնն են:

Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել իմ ուսուցիչներուս՝ տիկին Լիւսիին, տիկին Էլոյին, պարոն Սարգիսին եւ պարոն Վահէին: Բոլորն ալ սորվեցուցին եւ շեշտեցին թէ որքան կարեւոր է որ խօսինք հայերէն եւ շարունակենք Հայ Դատը, որպէսզի հասնինք մեր նպատակին:

Շնորհակալութիւն տնօրէնուհի՝ տիկին Մայտային, իր տարած աշխատանքին եւ նուիրումին համար:

Քնար Գրաֆեան

Յունիս 12, 2021



Արժանապատիւ Տէր հայր,

Յարգելի ներկաներ,

Այս պահուն կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել ծնողքիս, որ ամէն շաբաթ օր զիս բերին դպրոց. Տիկին Մայտային եւ ուսուցիչներուս, որոնք զիս դաստիարակեցին, մեծ հայրիկիս, որ քաջալերեց զիս:

Սուրբ Ստեփանոս Ազգային Վարժարանի հինգերորդ դասարանի շրջանաւարտ հանդէսին, խօսքիս մէջ անդրադարձայ պաղպաղակ բառին, որ ինծի շատ հաճելի կը թուէր: Այսօր եօթը տարիներէ ետք Հայ Համայնք բառը մեծ ու խոր իմաստ ունի ինծի համար:

Վերջին եօթը տարիներուն անդամ եղած եմ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան, առաւել եւս եղած եմ Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ վարժարաններու աշակերտ: Մաս կազմելով այս բոլորին, սորվեցայ համագործակցիլ ընկեր-ընկերուհիներու հետ, պայքարիլ հայ նպատակներու համար եւ միշտ պաշտպանել մեր Հայրենիքն ու պահել հայ ինքնութիւնս:

Շաբաթօրեայ դպրոցը կարելիութիւն տուաւ ինծի արտայայտելու այս զգացումներս եւ սորվածներս հայ լեզուով՝ Հայերէնով:

Ամէն հայ որ կ'ապրի Ամերիկայի մէջ, պէտք է սորվի հայոց լեզուն եւ պատմութիւնը եւ պահէ մեր հայկական մշակոյթը:

Ցտեսութիւն

Անի Ուրֆալեան

Յունիս 12, 2021





Միրելի Ներկաներ,

Բարեւ ձեզ: Իմ անունս Լոռի Կանճեան է. Վեցերորդ դասարանէն ի վեր կը յաճախեմ Սուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ Դպրոց: Վեց տարիէ ի վեր ամէն Շաբաթ օր դպրոց գալով նոր բաներ սորված եմ հայկական մշակոյթի մասին. ինչպէս նաեւ ուրախ էի որ իմ ընկերուիկներս կը տեսնէի, որոնց հետ աւարտած էի Սուրբ Ստեփանոս Ազգային Վարժարանը:



Շաբաթօրեայ դպրոցը ինծի սորվեցուց ինչպէս գորացնեմ հայերէնս, թէ որքան կարեւոր է մեր լեզուն եւ մշակոյթը պահել եւ խօսիլ հայերէն: Կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել բոլոր ուսուցիչներուն եւ մանաւանդ տիկին Մայտային, որ իր բոլոր ժամանակն ու աշխատանքը կը դնէ այս դպրոցին համար եւ մեզի սորվեցուցած է որ միշտ հպարտ ըլլանք հայ ըլլալով եւ սիրենք մեր հայրենիքը:

Շնորհակալութիւն բոլորին

Լոռի Կանճեան

Յունիս 12, 2021

Յովհաննէս Թումանեան

“Լեզուն է ամէն մի ժողովրդի ազգային գոյութեան եւ էութեան ամենախոշոր փաստը, ինքնուրոյնութեան ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմութեան ու հեռաւոր անցեալի կախարդական բանալին, հոգեկան կարողութիւնների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանութիւնը”:



Արժանապատիւ Տէր Անդրանիկ Աւագ Քահանայ Պալճեան,
Տէր Սամուէլ Քահանայ Աճէմեան, եւ Յարգելի Հոգաբարձութիւն Ս. Ստեփանոս եկեղեցւոյ,
Յարգելի ինսամակալութիւն Ս. Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ դպրոցի, Յարգարժան Տնօրէնութիւն
եւ Ուսուցչական Կազմ,
Յարգարժան Հ.Օ.Մ-ի զոյգ մասնաճիւղեր եւ Շատ սիրելի ծնողներ ու սիրելի ներկաներ:

Այս օրը ինձի համար անմոռանալի օր մըն է որ կը սպասէի տարիներէ ի վեր. այս երջանիկ
պահը կը պարտիմ ձեզ սիրելի տնօրէնուհի Տիկին Մայտա Մելքոնեան եւ սիրելի Ուսուցչական
Կազմ, որ ջանք չխնայեցիք եւ իսկական ծնողքի նման զիս հասցուցիք այս օրուան: Ս. Ստեփանոս
Շաբաթօրեայ Հայ դպրոցը հիմնուած է 85 տարիներ առաջ, եւ այսօր հասած է Հայկական
Բարձրագոյն վարժարանի: Ես սկսած եմ այս դպրոցը յաճախել 4 տարեկան հասակիս եւ այսօր
կը հեռանամ երիտասարդ մը, իմ ձեռքին ունենալով Հայկական Երկրորդականի վկայականս:
Սիրելի Տնօրէնուհի եւ Ուսուցչական Կազմ, չեմ գիտեր ինչ բառեր գործածեմ իմ խորին
շնորհակալութիւնս յայտնելու ձեզի, միայն խոնարհելով ձեր առջեւ յուզուած եւ ուրախ կ'ըսեմ
ձեր վարձքը կատար: Խօսք ունիմ այն ուսուցիչներուն, որոնք անցեալ տարիներու ընթացքին
ջանք չխնայեցին այս դպրոցին համար, ձեր ալ վարձքը կատար սիրելիներ: Խօսք ունիմ նաեւ իմ
դասարանի ընկերներուս, որոնք այլ եւ այլ պատճառներով հեռացան, սակայն չեն գիտեր թէ ինչ
կորսնցուցին իրենց կեանքէն, կրնամ ըսել ամենէն թանկագին պահերը կորսնցուցին:

Ես առած մը լսած եմ որ կ'ըսէ թէ, մէկ ծաղիկով գարուն չի գար, սակայն մէկ Մեսրոպ
Մաշտոց, մէկ Վարդան Մամիկոնեան, մէկ Ներսէս Շնորհալի, մէկ Գրիգոր Նարեկացի, մէկ
Կոմիտաս, եւ շատ նման անհատներ կը ծաղկեցնեն եւ կը զարդարեն Հայոց Մշակոյթը: Երբ
Ամերիկեան դպրոց սկսայ, մօրս հարցուցի թէ ինչ՞ ու ես երկու դպրոց կ'երթամ, մայրս ըսաւ «Մենք
հայ ենք, Անգլերէն կը խօսինք, որովհետեւ Ամերիկա կ'ապրինք, իսկ Հայերէնը կը սորվինք եւ կը
խօսինք պահելու համար մեր Հայ լեզուն, Ազգութիւնը, Հայրենիքը եւ ինքնութիւնը»: Իմ սիրելի
ծնողք, ուրեմն ես այս պահուն գլուխս բարձր բռնած եւ իմ ձեռքիս ունենալով Հայկական
վկայականս, շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեզի: Մնաք բարով Ս. Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ
դպրոց իմ մայր բուրաստան, պիտի յիշեմ քեզ յաւիտեան:

Աւելի ճիշդ կ'ուզեմ ըսել Յոնութիւն:

Յակոբ Քէչէճեան

Յունիս 11, 2022





Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Նայրապետին կողմէ Անուշաւան Սրբազան Արքեպիսկոպոս Դանիէլեան կը պարգեւատրէ փնօրէնուիի՝ Մայրա Մելքոնեանը ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ շքանշանով:
Կիրակի Նոկտեմբեր 17, 2021

Longtime Armenian Educator To Be Honored with Mesrob Mashdots Award

On behalf of His Holiness Aram I, Catholicos of the Holy See of Cilicia, dedicated Armenian educator, humanitarian activist, and St. Stephen's community member Mayda Melkonian will be awarded the Mesrob Mashdots Award. His Eminence, Archbishop Anoushavan Tanielian, Prelate of the Eastern Prelacy, will present the award.

The award will be presented on Sunday, October 17 immediately, following divine liturgy, followed by a light luncheon in the Church Hall.

The Mesrob Mashdots Award honors those individuals who have made a life-long commitment to serving the Armenian people, specifically in preserving our culture. It is awarded to those who have made significant contributions in the fields of Armenian music, arts, education and literature.





ՓՈՔՐԻԿ

15.05.2022

Սուրբ Ստեփանոս Շաբաթօրեայ Հայ Դպրոցի յարգելի պաշտօնակիցներ,

Յարգելի ուսուցչուհի՝ օրդ. Նարինե Ապրիմեան,

Նախ ՓՈՔՐԻԿ Հեքիաթահաւաքին ձեր մասնակցութեան համար շնորհակալութիւն կը յայտնենք:

Հեքիաթահաւաքին 6 երկիրէն 39 գրող 50 հեքիաթով մասնակցեցաւ:
Վերջաւորութեան երեք պատանի եւ երեք չափահաս գրիչ խնձորներ ստացան:

Նաեւ լաշխուեցան «յատուկ մրցանակներ», որոնք նիւթական պարգեւներ չունենալով հանդերձ կը ձգտին բաջալերել հեղինակները:

Հեքիաթահաւաքին մասնակցող բոլոր հեքիաթները միասնաբար պայծառ լուսապատկեր մը ստեղծեցին մեր աչքերուն առջեւ՝ իրենց զանազան եւ հաճելի նիւթերով:

Սիրելի Ճիաննա Ալեքանտրեանին, Կարէն Թոքաթլեանին եւ Սելինա Փափագեանին «Կարէն Կապիկին Չամիչները» հեքիաթն ալ անոնցմէ մէկն էր եւ պատանի մասնակիցներու շարքին երեք «յատուկ մրցանակ»էն մէկուն արժանացաւ:

Մրտանց կը շնորհաւորենք ձեր դպրոցը, ուսուցիչները եւ աշակերտները եւ կը մաղթենք նորանոր յաջողութիւններ:

Յաջորդ Հեքիաթահաւաքին կրկին հանդիպելու յոյսով:

Սէր ու յարգանք

ՓՈՔՐԻԿ





2021-ի Հինգերորդ Դասարանի աշակերտները հեղինակած էին ստորև գրուած պատմութիւնը.-

Կարէն Կապիկին Զամիչները

Կարէն Կապիկը շատ կը սիրէ չոր չամիչ ուտել: Ան գիտէ որ չամիչ ուտելը օգտակար է, ուրեմն ամէն օր տասը հատ կ'ուտէ: Օր մը, Կարէն Կապիկը ծառին վրայ նստած չամիչ կ'ուտէր երբ Սելինա Առիւծը ծառին մօտեցաւ փայլուն աչքերով:

«Կարէն Կապիկ, հաճիս կրնա՞մ մէկ հատ չամիչ ունենալ» հարցուց Սելինա Առիւծը:

Կարէն Կապիկը մտածեց ու մտածեց ու հանդարտ կերպով պատասխանեց, «Ոչ, ասոնք իմ չամիչներս են»:

Սելինա Առիւծը տխուր-տխուր սկսաւ քալել դէպի տուն:



Քիչ ետք, Ճիաննա Ընձուղտը մօտեցաւ ծառին ու ըսաւ «Կարէն Կապիկ, հաճիս կրնա՞մ մէկ հատ չամիչ ունենալ»:

Կարէն Կապիկը բարձրահասակ Ճիաննա Ընձուղտին մեծ աչքերուն նայելով ըսաւ «Ոչ, ասոնք իմ չամիչներս են»:

Անօթի Ճիաննա Ընձուղտը շուարած դիտեց Կարէն Կապիկը, որ չամիչները մէկ-մէկ օդին մէջ նետելով կ'ուտէր: Յանկարծ, Ճիաննա Ընձուղտը երկար լեզուով բռնեց չամիչ մը ու սկսաւ քալել դէպի տուն:

Կարէն Կապիկը զարմացաւ որ Ճիաննա Ընձուղտը իր չամիչը գողցաւ իրմէ: Կարէն Կապիկը շատ զայրացած էր: Որոշեց որ Ճիաննա Ընձուղտին տունը պիտի երթայ, որ իրմէ ետ առնէ իր չամիչը: Նախ Սելինա Առիւծին տունը գնաց իրմէ օգնութիւն խնդրելու համար:

Կարէն Կապիկը ու Սելինա Առիւծը իրարու հանդիպեցան Ճիաննա Ընձուղտին տունը: Երբ Կարէն Կապիկը դուռը զարկաւ, Ճիաննա Ընձուղտը դուռը բացաւ:

«Ես իմ չամիչս ետ կ'ուզեմ» հրամայեց կապիկը:

«Ես արդէն կերած եմ քու չամիչդ» ըսաւ Ճիաննա Ընձուղտը:

Սելինա Առիւծը ապշած մտիկ ըրաւ:

«Բայց այդ իմ չամիչս էր: Դուն պէտք է ինձի ուրիշ չամիչ տաս» ըսաւ Կարէն Կապիկը:

«Ես չամիչ չունիմ, բայց խաղող ունիմ»:





Երեք ընկերները նստեցան ու միասին խաղող կերան:

Յաջորդ օրը, Կարեն Կապիկը, Սելինա Առիծը եւ Ճիաննա Ընծուդտը նստած էին սեղանին շուրջը դպրոցի ճաշասենեակին մէջ: Բոլոր դպրոցականները պոռալով կը վազէին դէպի իրենց տեղերը: Աշակերտները շատ անօթի էին, մանաւանդ Կապիկը, Առիծը ու Ընծուդտը:

Կարեն Կապիկը, Սելինա Առիծը եւ Ճիաննա Ընծուդտը բացին իրենց ճաշամանները: Ճիաննա Ընծուդտը մեծ կարմիր ելակներ հանեց իր ճաշամանէն:

«Սելինա Առիծ, դուն ի՞նչ բերիք ուտելու» հարցուց Ճիաննա Ընծուդտը: Ճիաննա Ընծուդտը մեծ դեղձ մը հանեց իր ճաշամանէն:

«Ես համով դեղձ ունիմ» Ճիաննա Ընծուդտը պատասխանեց:

Միեւնոյն ժամանակ Կարեն Կապիկը մեծ կարմիր խնձոր հանեց իր ճաշամանէն: Սելինա Առիծին եւ Ճիաննա Ընծուդտին աչքերը փայլեցան երբ տեսան Կարեն Կապիկին համով խնձորը:

«Կրնա՞մ քու խնձորդ ուտել» հարցուց Ճիաննա Ընծուդտը:

«Կրնա՞մ քու խնձորդ ուտել» հարցուց Սելինա Առիծը:

«Ոչ, ասիկա իմ խնձորս է» պատասխանեց Կարեն Կապիկը:



Կարեն Կապիկը խնձորը օդին մէջ նետեց ու բերանը մեծ բացաւ:

Խնձորը ինկաւ Կարեն Կապիկին բերնին մէջ եւ ան մէկ խածիկով ամբողջ խնձորը կերաւ:

Յաջորդ օրը, Կարեն Կապիկը, Սելինա Առիծը եւ Ճիաննա Ընծուդտը նստած էին սեղանին շուրջը դպրոցի ճաշասենեակին մէջ: Բոլոր դպրոցականները պոռալով կը վազէին դէպի իրենց տեղերը: Աշակերտները շատ անօթի էին, մանաւանդ Կապիկը, Առիծը ու Ընծուդտը:

Կարեն Կապիկը, Սելինա Առիծը եւ Ճիաննա Ընծուդտը բացին իրենց ճաշամանները: Ճիաննա Ընծուդտը մեծ կարմիր ելակներ հանեց իր ճաշամանէն:

«Սելինա Առիծ, դուն ի՞նչ բերիք ուտելու» հարցուց Ճիաննա Ընծուդտը: Ճիաննա Ընծուդտը մեծ դեղձ մը հանեց իր ճաշամանէն:

«Ես համով դեղձ ունիմ» Ճիաննա Ընծուդտը պատասխանեց:

Միեւնոյն ժամանակ Կարեն Կապիկը մեծ կարմիր խնձոր հանեց իր ճաշամանէն: Սելինա Առիծին եւ Ճիաննա Ընծուդտին աչքերը փայլեցան երբ տեսան Կարեն Կապիկին համով խնձորը:

«Կրնա՞մ քու խնձորդ ուտել» հարցուց Ճիաննա Ընծուդտը:





«Կրնա՞մք իսկ խնամող ուտել» հարցուց Սելինա Առիւծը:

«Ոչ, ասիկա իմ խնամրա է» պատասխանեց Կարէն Կապիկը:

Կարէն Կապիկը խնամրա օդին մէջ նետեց ու բերանը մեծ բացաւ: Խնամրա ինկաւ Կարէն Կապիկին բերնին մէջ եւ ան մէկ խածիկով ամբողջ խնամրա կերաւ:

Կարէն Կապիկը, Սելինա Առիւծը եւ Ճիաննա Ընծուղտը միասին տուն կը քալէին դպրոցէն ետք: Յանկարծ իրենց աչքերուն առջեւ պզտիկ թուղթ մը տեսան ծառի ճիւղէն կախուած: Երեք ընկերները վազեցին դէպի ծառը: Իր երկար լեզուով, Ճիաննա Ընծուղտը բռնեց թուղթը ու յանձնեց Կարէն Կապիկին: Կարէն Կապիկը ծալլուած թուղթը բացաւ ու երեք ընկերները բերանին բաց զարմացած կարդացին գրութիւնը:

«Ասիկա գանձի քարտէս մըն է» ուրախութեամբ պոռաց Սելինա Առիւծը:

«Այո, ճիշդ է» պատասխանեց Ճիաննա Ընծուղտը:

«Մենք պիտի հարստանանք» պոռաց Կարէն Կապիկը:

Երեք ընկերները քալեցին եւ հետեւեցան գանձի քարտէսի կարմիր նշանին: Հասան իրենց տան մօտի խաղավայրը: Խաղավայրը լեցուած էր փոքրիկներով: Փոքրիկները հոս ու հոն կը վազէին իրարու ետեւէն ու կ'օրօրուէին օրօրոցներուն վրայ:

«Այս գանձի քարտէսը ցոյց կու տայ որ գանձը օրօրոցին տակն է» ըսաւ Կարէն Կապիկը: Ընկերները վազեցին դէպի օրօրոցները:

«Ես կարմիր նշանը կը տեսնեմ» պոռաց Սելինա Առիւծը:

Երեք ընկերները հասան ճիշդ կարմիր նշանին քով:


«Գանձը գտանք» պոռաց Ճիաննա Ընծուղտը:

«Փորելու սկսինք» ըսաւ Կարէն Կապիկը:

Երեք ընկերները իրենց թաթերով սկսան փորել:

Յանկարծ շատ, շատ խնամրաներ, պանաններ, ու դեղձեր տեսան:

«Մեր սիրածները» պոռացին երեք ընկերները:



*Կարէն Թոքաթլեան
Սելինա Փափագեան
Ճիաննա Ալեքսանտրեան*

ԱՄՆԻ Արեւելեան Շրջանի ՀՕՄԻ Շաբաղրութեան Մրցում



Միօրեայ Վարժարաններ

Հայերէն - 7-րդ եւ 8-րդ Դասարաններ

2-րդ Մրցանակ

Մենք հայերս թեպէտ սփիւռքի մէջ կ'ապրինք եւ հեռու ենք մեր հայրենիքէն, շատ կարեւոր է որ մենք պահենք մեր ազգութիւնը: Զանազան պատճառներով հայը միշտ գաղթած է սփիւռքի տարբեր երկիրներ, բայց միշտ մեր լեզուն եւ կրօնքը վառ պահած են. սորվեցուցած են հայ մանուկներուն հայերէն գրել, գրել, կարդալ եւ խօսիլ, որպէսզի օրինակելի երիտասարդներ դառնան ապագային:



Ամերիկայի մէջ, մենք մեր հայ ազգը պէտք է պահպանենք: Ես ամէն Շաբաթ օրերը հայկական դպրոց կ'երթամ հայերէն գրել եւ կարդալ կը սորվիմ, տունը ընտանիքիս հետ լաւ հայերէն կը խօսիմ:

Փափաքս է որ երբ մեծնամ շինարար ըլլամ, որպէսզի երթամ հայրենիք եւ հոն հսկայ շէնքեր շինեմ, օգնականներ ունենամ եւ բոլորս միասին աշխատինք, շահինք եւ մեր ընտանիքի ապրուստը ապահովենք: Այս ձեռով նաեւ օգտակար դառնանք պետութեան, մեր շահածէն բաժին մը տալով, որպէսզի զենքեր գնեն զինուորներուն, որոնք քաջաբար կը դիմադրեն թշնամիին վերադարձնելու մեր սուրբ հողերը:

Ալեքս Պըլլքեան - 8-րդ

3-րդ Մրցանակ

Ի՞նչ են նախապայմանները ազգի մը յաջողութեան եւ զարգացման:

Իմ կարծիքով, առաջին պայմանը մարդոց գիտակցութիւնն ու հետաքրքրութիւնն է: Եթէ ժողովուրդ մը իր ազգին կամ հայրենիքին պատմութիւնը լաւապէս չգիտնայ կամ չսորվի, չի կրնար օգտակար ըլլալ իր ազգին եւ հայրենիքին:

Ես ապագային կ'ուզեմ պատմաբան ըլլալ, որ լաւապէս ուսումնասիրելով պատմութիւնն ու անցեալը մեր ազգին, կարողանամ ուրիշներուն ծանօթացնել եւ սորվեցնել հայ ժողովուրդին եւ իր անցեալի պատմութեան մասին: Այս ձեռով, պիտի փորձեմ օգտակար ըլլալ մեր նոր սերունդին. սփիւռքի մէջ գտնուող երիտասարդութեան մօտ արթնցնել հետաքրքրութիւն, սէր եւ վերջապէս ազգային գիտակցութիւնը, որպէսզի կարողութիւն ունենան օգնելու իրենց ազգին:

Լիաննա Սէրայտարեան - 7-րդ

ԱՄՆի Արեւելեան Շրջանի ՀՕՄի Շաբադրութեան Մրցում



One day schools:

English Essays— 3rd & 4th Grades

2nd Place winner

As a young member of the diaspora I keep my culture alive by going to an Armenian dance studio called ABAKA. It is also known as SAYAT NOVA. We learn traditional Armenian steps like Kertsi, Taksilla, Kochari, and much more. We have a recital coming up soon. We are dancing to the song called “Dzaghgazart”. We learn about how people in Armenia dance and dress. We have to wear a black leotard and skirt. We also wear tights and ballet shoes. The boys wear black pants, a white shirt and black dance shoes.



I also attend Armenian school on Saturdays. I sing, speak, write, and read Armenian. My teacher Mrs. Silva always teaches us new words and how to read better. She is kind and a great teacher.

When I grow up, I want to be a doctor. Eventually I want to go to Armenia and help wounded soldiers and people.

I will always keep my beautiful Armenian language and culture alive.



Taleen Ghazaryans

4th Grade



Հայոց Ցեղասպանությունը - Ապրիլ 24, 1915

Թուրքերը հայ ժողովուրդին, ցեղասպանության ժամանակ, իրենց տուներէն, տեղերէն հանեցին և սպաննեցին: Անոնք խաբեցին, թէ աւելի ապահով տեղեր պիտի տանին զիրենք և յետոյ կրնան վերադառնալ:

Օսմանեան կառավարությունը այսպէս հայ հպատակներու դէմ 20րդ դարու առաջին ցեղասպանությունը իրագործեց:

Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ, 1914–18, թուրքերը կը կարծէին թէ Հայերը դաւաճանեցին թուրքերուն: Այդ պատճառով սպաննեցին մէկուկէս միլիոն հայեր: Թուրքական կառավարությունը ըսած է որ վայրագություններ եղած են հայ ժողովուրդին դէմ խմբակներու կողմէ և ոչ թէ ցեղասպանություն:

Թուրքերը միշտ չեն ընդունիր թէ ցեղասպանություն ըրած են եւ ուզած են հայերը ոչնչացնել:

Յակոբ Փափազեան-9-րդ



Հայաստանի Անկախությունը - Մայիս 28, 1918

1918-էն առաջ Հայաստանի վիճակը շատ ծանր էր, պատճառը Ցեղասպանությունն էր: Հայ հերոսները, քաջութեամբ կռուեցան Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի և Սարտարապատի մէջ և Մայիսի 28-ին Հայաստանը ազատություն ստացաւ:


Առաջին հանրապետությունը, 600 տարիներ անկախություն չունենալէ ետք, կազմուեցաւ հայ ժողովուրդի շատ դժուար օրերուն, երբ հազարաւոր հայ գաղթականներ հազիւ փրկուած էին երիտթուրքական բնաջնջման ծրագիրէն: Հայաստանի հանրապետութեան արեւմտեան և հարաւ-արեւմտեան գաւառները՝ Կարսը, Արտահանը, և ուրիշներ, Արարատ լեռով, անցան քեմալական Թուրքիային, իսկ արեւելեան գաւառները՝ բոլշեւիկներու կողմէ բաժնուեցան մի քանի մասերու՝ Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւն, Նախիջևան, Արցախ, Գարդման-Գանձակ՝ Ադրբեյճանի կազմին:

Կեանքը շատ կարճ եղաւ Առաջին Հանրապետութեան, բայց շատ կարեւոր, որովհետեւ Հայոց Պետականությունը հիմնուեցաւ:

Մարալ Աբրահամեան 10-րդ
Քաթրինա Արուեստեան



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ




Զաւէն
Քուչաքճեան

Հորիզոնական

- 3. գիտնալ ցեղասպանութիւնը
- 6. անօթութիւն
- 7. դիմադրութիւն
- 9. ցեղի մը ոչնչացումը
- 11. Թուրք պատերազմական նախարար
- 12. Թուրք զինուորական ղեկավար
- 13. երկրէն դուրս քշուած

Ուղղահայեաց

- 1. Հայաստանի մէկ մասը
- 2. Թրքական (հին անունը)
- 4. Ցեղասպանութիւն կատարողներ
- 5. Հայերը ջարդող ազգ
- 8. մարտիրոսներ
- 10. Թուրք նախարար (ներքին)



ԱՌՅԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՅՔ




2
0
2
0



1
2
0
2
1



ANEC SIAMANTO & AVC CLASS





Ուսուցչական Ժողով





ԱՌՅԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ



ԱՄԱՆՈՐ 2021





Մանկամասեր



Ա. շարք ձախեն աջ՝ Ալեքս Ֆարրըլ, Արմեն Ֆարրըլ, Լիաննա Պետրոսեան, Կարեն Լեյլեյաճեան եւ Վիքթորիա Քոզոյք:

Բ. շարք ուսուցչուհի Տիկ.Նայիրի Մանճիկեան :
(Նկարեն կը բացակայի՝ Ալեքսա Եարտըմեան):

Մանկապարտեզ



Ա. շարք ձախեն աջ՝ Տալիթա Պել, Մելանի Ղազարեանց, Զաքարիա Իլիատիս, Ալեքս Հելուաճեան եւ Նարեկ Թոմասեան,

Բ. շարք՝ ուսուցչուհի Օր. Վանա Գըլըճեան, :
(Նկարեն կը բացակային՝ Արեն Քարաքաշեան, եւ Մայքըլ Նորայր Գազարեան):



Ա. Դասարան



Ա. շարք ձախեն աջ՝ Արենի Գրեկ, Լարա Արոյեան եւ Գառնի Գոճանեան:
 Բ. շարք ուսուցչուհի Տիկ. Անի Գրլրճեան :
 (Նկարեն կը բացակայի՝ Անի Քարաքաշեան):

Բ. Դասարան



Ա. շարք ձախեն աջ՝ Լուսի Գեորգեան, Միլանա Տալտրմեան եւ Ժազլին Գազանճեան:
 Բ. շարք ձախեն աջ՝ ուսուցչուհի Տիկ. Նորմա Դեմիրճեան, Քելլըն Փափագեան, Ռաֆայել Պիլպիլեան եւ Մարթ Տաուտեան:
 (Նկարեն կը բացակային առցանց ուսանողներ՝ Լեւոն Զոպանեան, Լիօ Մուրատեան եւ Մարկրիթ Կեիքեան):



Գ. Դասարան



Ա. շարք ձախեն աջ՝ Էվրլին Մանճելիքեան, Ալիք Իսկէնտէրեան, Յոլեր Սերայտարեան, Մարի Խաչատուրեան եւ Նարեկ Տուգէնճեան:

Բ. շարք ձախեն աջ՝ Փաթրիք Մալվի, Հրակ Թագաճեան եւ Յովհաննէս Պալճեան:

Գ. Շարք՝ ուսուցչուհի Տիկ. Թամար Պերէճիքեան:

(Նկարէն կը բացակայի՝ Պիանգա Եարտըմեան):

Դ. Դասարան



Ա. շարք ձախեն աջ՝ Թալին Ղազարեանց, Մարիա Իլիասիս, Քրիս Աթաքեան, Շանթ Ֆարրէլ, Վանա Գոճանեան եւ Ռեմի Հաճճար:

Բ. շարք ձախեն աջ՝ Ուսուցչուհի Տիկ. Միլվա Կոտիկեան եւ Նովա Խաչատուրեան:

(Նկարէն կը բացակայի՝ Սարին Սերայտարեան):



Ե. Դասարան



Ձախեն աջ՝ ուսուցչուհի Օր. Նարինե Ապրիմեան, Նշան Պալճեան, Ալինա Պըրքեան, Սարին Թոքաթլեան, Կարեն Գըրըճեան եւ Գաբրիել Պիւլպիւեան:

Զ. Դասարան



Ձախեն աջ՝ Սելինա Փափագեան, Կարեն Թոքաթլեան, ուսուցչուհի Տիկ. Մաթիլտա Տաւուտեան, Տաթևիկ Սարգիսեան եւ Կասիա Թագաճեան:
(Նկարեն կը բացակայի Աւետիս Պէլ):



Է. Դասարան



Ա. շարք ձախեն աջ՝ Մանե՛ Տուգենճեան, Վանեսա Աթաքեան, Գարինա Գալայճեան, Մարալ Գուչաքճեան, Փաթիլ Մարտիրոս, Թիֆընի Արուեստեան:

Բ. շարք ձախեն աջ՝ Տիկ. Երան Մանճիկեան, Լիանա Մերայտարեան, Լոռի Տաուտեան, Ռաֆֆի Բարսեղեան եւ Մայքըլ Պիլպիլեան:

Ը. Դասարան



Ձախեն աջ՝ Յարութ Գըրճեան, Ալեքանտր Պըրքեան, Նարինե Մարտիրոս, Գարինա Տալտըմեան եւ ուսուցչուհի՝ Տիկ. Էլիզապեթ Աղբալարեան:

(Նկարեն կը բացակայի Քրիսթինա Տիգրամանճեան):



Թ. Դասարան



Զախեն աջ՝ Զաւեն Քուչաքճեան, ուսուցիչ՝ Պրն. Սարգիս Գարակէօզեան եւ Յակոբ Փափազեան:

(Նկարէն կը բացակային Անչելինա Նակաշյան, Օրլանա Պոյս եւ Նադալիա Պոյս):

Ժ- ԺԲ. Դասարաններ



Զախեն աջ Ժ դասարան՝ - Վարդինէ Քէչէճեան, Նորա Յարութիւնեան, Յոլին Բարսեղեան, Պրն. Սարգիս Գարակէօզեան, Գաթրինա Արուեստեան, Մարալ Աբրահամեան, Սեւակ Տուքէնճեան: Յակոբ Քէչէճեան(12րդ):

(Նկարէն կը բացակային՝ Յոլեր Արսլանեան Ֆիշըր (10րդ), Յովիկ Քէհեհեան (11րդ) եւ Սեւակ Կլորիկեան (11րդ):




Շաբաթ Մայիս 21, 2022-ին Կեսօրե ետք,
ձեռամբ Բարեջան Առաջնորդ Տեղ
Անուշաւան Սրբազան Դանիէլեանի,
մեր աշակերտներէն Յակոբ Քէչէճեան
եւ Աւետիս Պէլ, ինչպէս նաեւ նախկին
աշակերտ Արամ Ստեփանեան,
եկեղեցոյ դպիր ձեռնադրուեցան:

Մեր սրտագին շնորհաւորութիւնները
իրենց եւ ծնողներուն:

Ու տե՛ս, որդիս, ո՛ր է լինես,
Այս լուսնի տակ ո՛ր է գնաս,
Թե մօ՛րդ անգամ մտքիցդ հանես,
Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս:
Միլվա Կապուտիկեան

ՇՆՈՐՀԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Շրջանաւարտ 'Յակոբ Քէչէճեան եւ Տնօրէնուհի' Մայտա Մելքոնեան



ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆ

Տէր Անդրանիկ Աւագ Քինյ. Պալճեան - նախագահ
 Տիկ. Յասմիկ Մարտիրոս - ատենապետուհի
 Տիկ. Մարի Արապեան - գանձապահուհի
 Տիկ. Լիզա Մեղրակեան - քարուղարուհի
 Պրն. Մանուէլ Բարսեղեան - խորհրդական
 Տիկ. Միլվա Կեպէշեան - խորհրդական
 Պրն. Յովսէփ Մէլքէշեան - խորհրդական
 Տիկ. Սոնիա Յակոբեան - Եկեղեցւոյ կապ
 Պրն. Ռիչարտ Փիլիկեան - Եկեղեցւոյ կապ



ԾՆՈՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՏԻԿԻՆՆԵՐ՝

Յասմիկ Մարտիրոս (խնամակալի կապ)
 Թամար Պերէճիքեան
 Միւզի Գեորգեան
 Անահիտ Պըլքեան
 Վեռա Ունճեան,
 Անոյշ Թագորեան,
 Պրէնտա Պարսումեան
 Ճիլտա Մալվի



ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԿԱԶՄ





Ա. շարք ձախէն աջ՝ Օր. Նարինէ Ապրիմեան,
 Տիկ. Էլիզապէթ Աղբալարեան, Տիկ. Անի
 Գըլքեան, Տիկ. Մայտա Մելքոնեան
 (Տնօրէնուհի), Տիկ. Մարինէ Մարգարեան
 Քավլաքեան, Օր. Օժենի Քավլաքեան, Տիկ.
 Նորմա Դեմիրճեան եւ Օր. Վանա Գըլքեան :

Բ. շարք ձախէն աջ՝ Տիկ. Թամար Պերէճիքեան,
 Տիկ. Միլվա Կոտիկեան, Տիկ. Նայիրի
 Մանճիկեան, Տիկ. Երան Մանճիկեան, Պրն.
 Սարգիս Գարակէօգեան եւ Տիկ. Մաթիլտա
 Տաուտեան:

Նկարէն կը բացակային՝ Տիկ. Բըրլին Վարժապետեան (պար) եւ Օր. Թինա
 Կոտիկեան (օգնական) :


ՄԱՆԿԱՄԱՍՈՒՐ



ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ



ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ





Շնորհակալություն Տիկ. Թենի Հաճճար

Խ
Ա
Ղ
Ա
Ն
Ք






Ե՛ւ



Ս
Ո
Ր
Վ
Ի
Ն
Ք



Մշակույթի Տոնակատարություն





Վարդանանց





Հսկում



Ճրագալոյց

Ուտնլուայ





Երգիչ Գեորգ Չաքմանեանի Այցը



Համազգային Հայագիտական Միութեան

Գրադարան



AT NAASR



Ապրիլ 24





Տէր Սամուէլ Աճէմեան



*Հսկում- Խաղաղական
Ժամերգութեան
շարականներէն
“Նայեաց Միրով” ի
փորձ*

Հսկում - Տէր Անդրանիկ Աւագ Քհնյ. Պալճեան



ԽՄԲԱՆԿԱՐ

